№ 24 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27

1896

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 № 24

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեգործութիւնը պարտաւորութիւն է.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը. Մատենագրութիւն. Նամակ Գանձակից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Մէնելիկի հրովարտակը. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆինլանդիայից.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է

—

Յայտնի է, որ Ամէրիկայում միլիոնատէրները զրեթէ մի ահագին դասակարգ են կազմում, որովհետև նրանց թիւը, ինչպէս հետազօտել է մի ֆրանսիացի գրող, հասնում է 31,250 հոգու։ Այդ դասակարգը իր ձեռքում կենտրոնացրած ունի 191 միլիարդ ֆրանկ, որ ժողովրդական ընդհանուր հարստութեան 3/5 մասն է կազմում։

Սակայն ամէրիկական ժողովուրդը հաշտ աչքով է նայում այդ արխիմիլիոնէրների վրա, որովհետև նրանք չեն մոռանում իրանց ահագին հարստութիւնից բաւական նշանաւոր մասն յատկացնել ժողովրդին։

Մի քանի տարի առաջ յայտնի միլիոնատէր Վանդէրբիլդը կտակեց իր մահից յետոյ 500 միլիոն ֆրանկ՝ գործադրել հասարակական օգտակար հաստատութիւններ հիմնարկելու։ Եւ ահա այդ իրողութիւնը, ինչպէս հաղորդում են լրագիրները, միւս միլիոնատէրների մէջ առաջ բերեց մի նշանաւոր երևոյթ։ Նրանցից մի քանիսը, և մանաւանդ Կօրնէջի անունով միլիոնատէրը, մի շարք լրագրական և հրապարակախօսական յօդուածներով, սկսեցին ապացուցանել, թէ նախ՝ բարեգործութիւնը—լոկ բարերարութիւն չէ, այլ ուղղակի պարտականութիւն, երկրորդ, թէ բարեգործութիւնը պէտք է կատարել ոչ թէ մահից յետոյ, ինչպէս արել է Վանդէրբիլդը, այլ կենդանութեան ժամանակ և միլիոնատէրները պարտաւոր են դեռ իրանց կենդանութեան ժամանակ հիմնել և պահպանել համալսարաններ, դպրոցներ, ձրի ընթերցարաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, լողարաններ, կօնցերտային դահլիճներ, մի խօսքով—մտածել և հոգ տանել ժողովրդի ֆիզիկական, մտաւոր և բարոյական զարգացման մասին, որովհետև այդ նրանց ուղղակի և սուրբ պարտականութիւնն է։

Կօրնէջի իր այդ տեսութիւնը ապացուցանում է նրանով, թէ միլիոնատէրները պարտաւոր են մասն և բաժին տալ ժողովրդին այն հարստութիւնից, որ նրանք ստացել են և առել են նոյն այդ ժողովրդից, որովհետև նրանք այդ հարստութիւնը ձեռք են բերել ժողովրդի օգնութեամբ և միջոցով, հետևաբար, վերադարձնել նրանց՝ նրանցից ստացած հարստութեան մի մասը—այդ հասարակ բարեխղճութեան և պարզ արդարութեան պահանջ է, մի պահանջ, որը նրանք պէտք է կատարեն անձամբ, կամ մի պարտք, որի հատուցումը նրանք չը պէտք է յետաձգեն իրանց ժառանգներին։

Եւ այդ տեսակէտը գործով ապացուցանելու համար, նրա ջատագով միլիոնատէրները սկսել են տասնեակ միլիոն դոլլարներ նուիրել և զանազան հասարակական օգտակար հիմնարկութիւններ հաստատել։

այսպէս, օրինակ, Պիբոդի միլիոնատէրը նուիրել է 20 միլիոն որբանոցի համար, Բալտիմորը—15 միլիոն՝ սկզբնական դպրոցների համար, Կօրնէջին—տասնեակ միլիոններ՝ համալսարան հիմնելու համար, և այլն։

Ի հարկէ, երբ մի հասարակութիւն հասնում է այն եզրակացութեան, թէ բարեգործութիւնը լոկ փառասիրութիւն, հաճոյքից կախված գործ չէ, այլ ուղղակի պարտաւորութիւն, երբ մի երկրի հարուստը այն համոզմունքն է զոյացնում, թէ, ինչպէս և է իրօք—իր դիզած հարստութիւնը նա ստացել է ժողովրդից, ուստի և բարոյապէս պարտաւոր է վերադարձնել նրան այդ հարստութեան մի մասը,—այդ միայն ցոյց է տալիս, թէ ինչ աստիճան բարձր կուլտուրայի է հասել այդ երկիրը։

Պահանջել, որ հայ հարուստները միլիոններ և հարիւր հազարներ նուիրեն, որ մեր հարուստներն էլ հասնեն այդ տեսակ եզրակացութեան, որին հասել են Ամէրիկայի միլիոնատէրերը, այդ, ի հարկէ, մեր կողմից ցնորք կը լինի, ի նկատի ունենալով մեր հասարակութեան կուլտուրայի ստոր աստիճանը. բայց մի բան՝ որ անպայման կարելի է ցանկալ և իրագործել, այդ այն է, որ մեր հարուստները վերջապէս մտածեն, որ բարեգործութիւնը կարելի է և պէտք է կատարել կենդանութեան ժամանակ և ոչ մահից յետոյ, մանաւանդ որ հաճելի է կենդանութեան ժամանակ, իր սեփական աչքերով տեսնել բարեգործութեան արդիւնքը, իր արածի հետևանքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Փետրվարի 25-ին, կիրակի, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում կայացաւ կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Նախագահ Նաւասարդեանի հիւանդութեան պատճառով այդ նիստի համար նախագահ ընտրվեց Մեսրոպ քահանայ Մելեան։

Ժողովը քննեց խորհրդի առաջարկած՝ ընկերութեան 1896 թվի ընդհանուր, այն է խորհրդի և 16 ճիւղերի նախահաշիւները առանձին առանձին և այդ նախահաշիւների ամփոփումը։ Խորհուրդը առաջարկել էր իր համար նախահաշիւ հետևեալ կերպով. Մուտք՝ 8,403 ռուբլի, որից մնացորդ 1895 թվից—1,328 ր. 50 կ. և 1,000 ր. հանգուցեալ Գէորգեանի ժառանգներից ստացած նուէր, ուրեմն իսկապէս 1896 թվի ընթացքում խորհուրդը մուտք սպասում է—6,704 ռուբլի։ Ելքը այսպէս էր կազմված, դուրս գալով 8,403 ր. գումարից յատուկ գումարները—939 ր. 45 կ. ուսուցչական ցէնզի, գործին յատկացրած այլ և աւելացնելով ֆոնդի վրա Գէորգեանների 1,000 ր. նուէրը,—մնացած 5,315 ր. որոշված էր յատկացնելու թոշակաւորներին, ուսումնարաններին, ընթերցարանին, տառապեալներին և դիւանական ծախսերին։ Տառապեալների համար որոշված էր 420 ր., իսկ գրքեր ձեռք բերելու համար—100 ր.։

Ժողովը անբաւարար գտնելով այդ նախահաշիւը, որոշեց անդամների թիւը 300-ից հասցնել 340-ի, տառապեալների համար յատկացնել նաև Գէորգեանների տուած 1,000 ր. նուէրը, իսկ գրքերի համար որոշել 300 ռուբլի։ Մնացած կէտերը անփոփոխ հաստատվեցին։

Դրանից յետոյ ժողովը քննեց 16 ճիւղերի նախահաշիւները (երկու ճիւղ—Հին-Նախիջևանը և Ցխինվալը դեռ չեն ուղարկել իրանց նախահաշիւները)։ Բոլոր նախահաշիւները ժողովը հաստատեց անփոփոխ, խորհրդի առաջարկած ձևով և միայն Արմաւիրի վերաբերմամբ որոշեց առաջարկել խորհրդին՝ խնդրել Արմաւիրի ճիւղից իր մնացորդ 2,500 ր. գումարից մի որոշ գումար յատկացնել տառապեալների օգտին և ուղարկել այդ գումարը խորհրդին։

Թէ խորհրդի և թէ 16 ճիւղերի նախահաշիւների ամփոփումը հետևեալն է։ Մուտք սպասվում է ընդամենը—32,128 ր. 70 կ., որից մնացորդ անցեալ տարիներից—9,961 ր. 35 կ.։ Ելք որոշված է նոյնպէս 32,128 ր. 70 կ., որի գլխաւոր կէտերն են. 1) Ուսումնարաններին—3,055 ր. 2) Ընթերցարաններին—7,385 ր. 9 կ.,

Մի քանի տարի առաջ յայտնի միլիոնատէր Վանդէրբիլդը կտակեց իր մահից յետոյ 500 միլիոն ֆրանկ՝ գործադրել հասարակական օգտակար հաստատութիւններ հիմնարկելու։ Եւ ահա այդ իրողութիւնը, ինչպէս հաղորդում են լրագիրները, միւս միլիոնատէրների մէջ առաջ բերեց մի նշանաւոր երևոյթ։ Նրանցից մի քանիսը, և մանաւանդ Կօրնէջի անունով միլիոնատէրը, մի շարք լրագրական և հրապարակախօսական յօդուածներով, սկսեցին ապացուցանել, թէ նախ՝ բարեգործութիւնը—լոկ բարերարութիւն չէ, այլ ուղղակի պարտականութիւն, երկրորդ, թէ բարեգործութիւնը պէտք է կատարել ոչ թէ մահից յետոյ, ինչպէս արել է Վանդէրբիլդը, այլ կենդանութեան ժամանակ և միլիոնատէրները պարտաւոր են դեռ իրանց կենդանութեան ժամանակ հիմնել և պահպանել համալսարաններ, դպրոցներ, ձրի ընթերցարաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, լողարաններ, կօնցերտային դահլիճներ, մի խօսքով—մտածել և հոգ տանել ժողովրդի ֆիզիկական, մտաւոր և բարոյական զարգացման մասին, որովհետև այդ նրանց ուղղակի և սուրբ պարտականութիւնն է։

Կօրնէջի իր այդ տեսութիւնը ապացուցանում է նրանով, թէ միլիոնատէրները պարտաւոր են մասն և բաժին տալ ժողովրդին այն հարստութիւնից, որ նրանք ստացել են և առել են նոյն այդ ժողովրդից, որովհետև նրանք այդ հարստութիւնը ձեռք են բերել ժողովրդի օգնութեամբ և միջոցով, հետևաբար, վերադարձնել նրանց՝ նրանցից ստացած հարստութեան մի մասը—այդ հասարակ բարեխղճութեան և պարզ արդարութեան պահանջ է, մի պահանջ, որը նրանք պէտք է կատարեն անձամբ, կամ մի պարտք, որի հատուցումը նրանք չը պէտք է յետաձգեն իրանց ժառանգներին։

Եւ այդ տեսակէտը գործով ապացուցանելու համար, նրա ջատագով միլիոնատէրները սկսել են տասնեակ միլիոն դոլլարներ նուիրել և զանազան հասարակական օգտակար հիմնարկութիւններ հաստատել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՖԻՆԼԱՆԴԻԱՑԻՑ

—

Հելսինգֆօրս, փետրվարի 12-ին

Յայտնի է, որ մարդկանց արական սեռը մարմնի կազմուածքի կողմից զօրաւոր և ուժեղ է, իսկ իգական սեռը՝ տկար և բարակ։ Ճշմարիտ է, պատահում են դէպքեր, որ մի կին աւելի մարմնեղ կազմուածք է ունենում, քան իր այրը, որ մի քոյր աւելի ուժեղ է լինում, քան իր երկու եղբայրը միասին. բայց սրանք բացառութիւններ են։ Ընդհանուր երևոյթն այն է, որ մարդկային ցեղի արական սեռը ֆիզիկապէս գերազանցում է իգականից։ Բայց ցաւալի իրողութիւն է, որ արական սեռը եսականութեամբ մոլորվելով երևակայել է, որ ինքը մտաւորապէս էլ է գերազանց։ Մահմէդի մասին հադիսը (աւանդագրութիւնը) ասում է, որ մարգարէն կանանց համար այն գաղափարն ունէր, թէ սրանք պէտք է իրանց այրերին երկրպագեն։ Եւ մի երևելի մահմէտական օրէնսգէտ առանց կատակի պնդում է, թէ կանայք հոգի չունեն։

Նայելով թէ մի ազգ կամ մի անհատ ինչ աչքով է նայում կնոջ վրա և նրան ինչպէս գնահատում, դրանով կարելի է որոշել այն ազգի կամ անհատի մտաւոր և կրօնական զարգացման աստիճանը։ Թէպէտ մենք՝ հայերս զարգացած ազգ ենք կոչվում, բայց դեռ շատ հեռու ենք աղջիկը և տղան, կինը և տղամարդը հաւասար համարելուց։ Մինթէ քիչ են մեզանում ոչ միայն գիւղացիներ և չը կրթվածներ, այլ նաև ուսում առած մարդիկ, որ չեն կարմրի նոյն իսկ իրանց քրոջ կամ մօր երեսին ասելու՝ «կնոջ մազերը երկար կը լինի, իսկ խելքը կարճ», մինչդեռ շատ կանայք կան, որոնց խելքը աւելի երկար է, քան իրանց մազերը, և շատ էլ խոշոր, հաստավիզ տղամարդիկ կան կարճ մազերով, որոնց խելքը և հասկացողութիւնը իրանց կարճ մազերիցն էլ կարճ է։ Օրինակի համար հէնց այդ տգեղ, վիրաւորիչ և սխալ առակը գործածող ինքնահաւան տղամարդիկը, որոնք երբէք չը խորհած և չը քննած լինելով իգական սեռի մտաւոր կարողութեան չափը, անմիտ արձագանքի պէս կրկնում են մահմէտական առածը «արվաղքն սաչը ուղուն օղուր, ագլը գրսսա»։

Սակայն մենք՝ հայերս մեր անտառ դրացի թուրքերից ոչ միայն շատ վնասակար և կորստաբեր առածների և սովորութիւնների հետ միասին այդ և դրա նման ուրիշ բաներ և հայեցուածքներ ենք ստացել, որ պէտք է հիմա իրրև անմարս թոյն ետ փոխենք, այլ մի նոր գալի բան էլ մենք մեր իսլամ հարևաններից վեր ենք առել.—դա մեր այն վատ և անհիմն կասկածն է, որ ունենք դէպի իգական սեռի բարոյականութիւնը։ Մենք, որ տեսել ենք, թէ ինչպէս թուրքը և պարսիկը իրանց կանանց փախցնում և ծածկում են, հարէմների մէջ բանտարկում ու կողպում են, յիմարաբար կարծել ենք, որ դա մի մեծ խելք է, և սկսել ենք մեր կանանց ու քոյրերի քթերին քիթկալ կապել և նրանց չադրաներով ծածկել, սեղանից զատել, հեռացնել, ամիսներով, տարիներով «անխօս» պահել՝ իբրև անխօս անասուն։ Իսլամի հիմնադիրը, երբ մեռաւ, ինն հատ կնիկ ունէր, որոնցից Աբուբէքրի ինը տարեկան աղջկայ Այիշայի հետ ամուսնացած ժամանակ ինքը արդէն ծերացած էր։ Նա գուցէ պատճառ ունէր կասկածելու անբարոյականութեան կամ անհաւատարմութեան մասին, և մի օր երբ կնոջ տան բազի պատի ետևը մի մարդու գլուխ նկատեց, իսկոյն կասկածից դրդված՝ հրամայեց, որ հարէմի բազի պատերը ամենաբարձր մարդկանց հասակիցն էլ բարձր չինվեն, որպէս զի ոչ ոք ներս չը նայէ։ Մեր նպատակը առ այժմ այն չէ, որ քննենք թէ որ սեռն է աւելի կասկածելի բարոյականութեան կողմից՝ արականը թէ իգականը, միայն այդչափը կասենք, թէ այն անձինք, որոնք պարսաւելի վարք են ունեցել կամ ունեն, հէնց նրանք են կասկածում։ Այս տողերը գրողը ինքը լսել է մի խոհուն թուրքի բերանից, թէ սխալ է այն մահմէտական հայեցուածքը, իբր թէ արական սեռը այդ կէտում աւելի վստահութեան արժանի լինի, քան թէ իգականը։ Կարծեմ որ մենք՝ հայերս էլ, եթէ լուրջ կերպով խորհենք, մենք էլ մեր մասին գուցէ մի և նոյն եզրակացութեան գանք։ Հայերս մեզանումս ենք բնութեան դէմ, արդարութեան դէմ և իրողութեան դէմ, երբ մեր մայրերին և քոյրերին կոչտ և վայրենի կերպով արհամարհելով՝ արական սեռից ցած ենք դասում։

Բայց աւելի և աւելի ցաւալին այն է, որ մեր կանայք իրանք էլ են հէնց իրանց ցած դասում։ Եթէ հայ կինը ինքը համոզվէր, որ թէ բնութեան օրէնքների համեմատ, թէ լուսաւոր ազգերի պատմութեան համեմատ և թէ քրիստոնէական վարդապետութեան համեմատ «չիք խըտիր, ոչ արուի, և ոչ իգի», այն ժամանակ հեշտ կը լինէր նրան օգնելը։ Բայց այսօր հայ կինը ինքն է տղամարդի հետ պատահած ժամանակ երեսը չուռ տալիս, քթի տակին խօսում, և ուրիշ տգեղ ու զզուելի ձևեր անում, կարծես թէ յանցաւոր լինի։ Դրա պատճառը հայ տղամարդն է։ Հայ տղամարդն է, որ հայ կնոջը ցեխն է կոխել, ոտքի տակ առել։ Եւ հիմա հայ տղամարդիկ, ձեր պարտքն է ձեր անիրաւութիւնը ուղղել։ Բռնեցէք ձեր մայրերի, ձեր քոյրերի և ձեր կանանց ձեռքից և բարձրացրէք, կանգնեցրէք ոտքի վրա, ձեզ հաւասար։

Աշխարհիս ամեն կողմերում արթնացել է կանանց խնդիրը։ Խոհեմ, բանիրուն, ուսեալ կանայք են ընդհանրապէս, որ մեծ ջանք են գործ դնում իրանց քոյրերին ծառայելու։ Զարմանալի է որ մանաւանդ փոքր Ֆինլանդիան է, որ այս բանում խիստ ժիր և առաջադէմ է։ Զարմանացութիւն չի լինի, եթէ ասենք, որ ամեն չաբաթ մի յօդուած գրէինք, երկու թերթից բաղկացած այն մասին, թէ կանանց խնդիրը և գործը այս երկրում ինչ ծաղկած և կենդանի վիճակի մէջ է, այնու ամենայնիւ չէինք կարողանայ

3) Ուսում ստացողներին—4,402 ր. 60 կ. 3) Տառապեալներին—3,251 ր. և այլն:

Նախահաշիվների հաստատութիւնից յետոյ, ժողովը անցաւ քննելու Ախալցխայի ճիւղի ընդհանուր ժողովի առաջարկութիւնը՝ ընկերութեան պատասխանատու անդամ ընտրել այդ ճիւղի նախկին նախագահ Խահակ Մելիք-Հայկազեանին:

Խորհուրդը, ինչպէս յայտնվեց նրա զեկուցումից, բաւական լուրջ համարելով այդ հարցը, երկար գրագրութիւն և բանակցութիւն է ունեցել Ախալցխայի ճիւղի հետ, կամենալով պարզել և լուսաբանել Մելիք-Հայկազեանի գործունէութեան մի քանի կէտերը: Ախալցխայի ճիւղի վարչութիւնը ներկայացրել է մանրամասն տեղեկագիր, որի քննութիւնից յետոյ միայն խորհուրդը որոշել է՝ առաջարկել կենտրոնական ընդհանուր ժողովին՝ յարգել Ախալցխայի ճիւղի միջնորդութիւնը:

Այդ առիթով երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան, որոնք տեւեցին մինչև գիշերվայ ժամը $1^1/_2$-ը. ուշ լինելու պատճառով, թէ այդ խնդրի վերջնական լուծումը և թէ ընտրութիւնները յետաձգվեցին յաջորդ ժողովին, որ տեղի կունենայ կիրակի, մարտի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին, դումայի դահլիճում:

Հարկաւոր ենք համարում նկատել, որ ժողովը արտասովոր կերպով բազմամարդ էր և շատ կենդանի անցաւ. թէ դահլիճը և թէ վերնատունը լի էին երկու սեռի ինտելիգենտ մեծ բազմութեամբ:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ակամայ մարդասպան»—Վլադ. Կորոլենկոի: Թարգ. Տ. Յովհաննիսեան. Թիֆլիս 1896.

«Գետնափորի երեխաները»—Վլադ. Կորոլենկոի. Թիֆլիս 1896.

«Մուֆլու»—Ուիդայի: Թարգմ. Յ. Օհանեան, Թիֆլիս, 1896.

Ռուսաց նոր գրողների մէջ շատ լաւ անուն է հանել Վլադիմիր Կորոլենկո: Մինչև այժմ նրա տուած վիպական գրուածքները համեմատաբար փոքրիկ թիւ են կազմում և բաղկացած են մանր պատմուածքներից և վէպիկներից: Սակայն դրանք իրանց կատարելապէս գեղարուեստական կազմուածքով, գեղեցիկ նկարագրութիւններով, այն իրական ճշդութեամբ, որով ուղղված են պատկերները, գործող անձերը և մանաւանդ այն լայն մարդասիրական գաղափարներով, որոնք փայլում են նրա ամեն մի գրուածքի մէջ, այնքան սիրելի են դարձել ընթերցող հասարակութեան համար, որ նորերումս լոյս տեսան եօթներորդ հրատարակութեամբ, մի աջողութիւն, որ շատ քիչ ռուս բելլետրիստներին է վիճակված:

Հրատարակչական ընկերութիւնը, հրատարակելով այդ երկու գործերը, առիթ է տուել հայ ընթերցող հասարակութեան ծանօթանալ ռուս տաղանդաւոր հեղինակի հետ: Ափսոս միայն, որ ընկերութիւնը չէ կարող պարծենալ հեղինակի առաջ, թէ բոլորովին անթերի է կատարել այդ գործը:

«Ակամայ մարդասպանը»—դա մի սիրուն պատմութիւն է ժողովրդական ընթերցանութեան համար: Նա ցոյց է տալիս, թէ ինչպէս մի հասարակ մարդ սպանում է մի աւազակին, որը ազատել էր նրան բանտից և որը նրա աչքին մի առաքինի մարդ էր երևացել, չնորհիւ այն հանգամանքի, որ միշտ խօսում էր Աստուծու անունով: Չարագործին ոչնչացնել մեղք չէ համարվում ոչ մի բարոյական օրէնքի առաջ: Բայց երբ օրէնքին սպասաւորում են անարժան կաշառակեր մարդիկ, այն ժամանակ բանտի մէջ փտում է և այնպիսի մէկը, որ ոչնչացրել էր աւազակների բունը: Նա մարդասպան է ընդհանուր անունով: Բայց ինչպիսի մարդասպան: Մանրամասնութիւնները պատմում է ձեզ հասարակ մարդը, պատմում է մի գեղեցիկ պարզութեամբ, որ պատկերացնում է ձեր առաջ մի մաքուր, կուսական սիրտ, մի սիրտ, որ ձգտում է հասկանալ, թէ ուր է ճշմարտութիւնը, բայց ընկնում է չարագործութեան որջը. և այն ժամանակ, երբ պէտք էր անխիղճ մարդկանց հրամանով կատարել մի սարսափելի եղեռնագործութիւն, նրա ձեռքը բարձրանում է չարագործութեան դէմ, և ապա նա գնում է կրելու իր պատիժը, որից ազատվելու հնարքը—կաշառք տալը—չէ գործադրվում:

Թարգմանութիւնը կատարված է գեղեցիկ կերպով, պարզ ժողովրդական լեզուով: Անախորժ տպաւորութիւն թողնում է միայն այն, որ թարգմանիչը դաւառաբարբառի գործածութիւնն է թոյլ տուել մաքուր գրական, մշակված լեզուի մէջ: Դա բոլորովին աւելորդ բան էր: Մինչ թարգմանիչը իրապէս համոզված է եղել որ եթէ, օրինակի համար, ամեն մէկին հասկանալի «փոքրիկ» բառի տեղ գրվի դաւառական «պուճուր» բառը, դրանով պատմուածքը աւելի ժողովրդականացած կը լինի...

Աւելորդ չենք համարում յիշել, որ «Մարդասպանը» երկրորդ անգամ է թարգմանվում: Առաջին թարգմանութիւնը մի քանի տարի առաջ լոյս է տեսել Շուշում:

Գալով «Գետնափորի երեխաները» գրուածքին, կասենք որ դա մի կոպիտ, անտաշ թարգմանութիւն է, որ բոլորովին փչացրել է հեղինակի հրաշալի նկարագրութիւնները:

Սեղ զարմացնում է, թէ ինչպէս է լոյս տեսել այդպիսի մի անշնորհք գործ մի ընկերութեան ձեռքով, որ ունի խմբագրական մի ամբողջ մասնաժողով: Եթէ չը լինէր այդ հանգամանքը, հայ ընթերցողը կունենար իր ձեռքում մի սիրուն պատմութիւն, որ նկարագրում է մի անչափահաս երեխայի սէրը դէպի թշուառ, անտուն ու անտէր երեխաները: Այդ նկարագրութեան մէջ շատ լաւ պարզված է, թէ ինչ ուժեղ համերաշխութեան կապ կարող է լինել հարուստ և աղքատ երեխաների մէջ:

Շատ անբաւարար թարգմանութիւն է նաև նոյն ընկերութեան հրատարակած «Մուֆլու» պատմուածքը, որ մանկական ընթերցանութեան համար վատ նիւթ չէ:—Եթէ Հրատարակ. ընկերութիւնը անպատճառ կամենում էր հրատարակել այդ գրուածքը, նա կարող էր օգտվել «Աղբիւրի» մէջ տպված թարգմանութիւնից, որ համեմատաբար աւելի մշակված է և կանոնաւոր: Առհասարակ, ծանր և անախորժ տպաւորութիւն են թողնում վերջին ժամանակներս բազմացած վատ թարգմանութիւնները: Գրական անկարողութեան տխուր պատկերներից մէկն էլ դրանք են, այդ թարգմանութիւնները: Պէտք է սովորեցնել թարգմանիչներին—իսկ սովորեցնելու շատ շատերին է հարկաւոր—որ նրանք պարտաւոր են բարեխիղճ լինել, վերին աստիճանի զգուշութեամբ և խնամքով վարվեն գործի հետ, լաւ հասկացած լինելով, որ վատ թարգմանութիւնը ոչ ոքին հարկաւոր չէ: Բայց ինչպէս կարող ենք սովորացնել: Միթէ նրանով, որ առանց աչ ու ձախ նայելու տպագրութեան կը յանձնենք ամեն մի անտաշ գրուածք:

Լ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 25-ին

Շաբաթ օր, ամսիս 24-ին, կայացաւ Գիւղատնտեսական ընկերութեան բաժնի առաջին ընդհանուր ժողովը: Նախագահում էր Գանձակի նահանգապետ իշխան Նակաշիձէ: Ներկայ էին բաժնի անդամներից մօտ 20 անձ: Թիֆլիսի կենտրոնական ընկերութեան կողմից ներկայ էր ժողովին ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնակատար Աղեքսանդր Քալանթար:

Նիստը սկսվեց բաժնի քարտուղար Սեգալի զեկուցման ընթերցանութեամբ: Իր զեկուցման մէջ Սեգալը մի համառօտ ակնարկ դցեց Գանձակի գաւառի գիւղատնտեսութեան ներկայ վիճակի վրա և առաջարկեց մի ծրագիր բաժնի գործունէութեան մասին: Գանձակի նահանգի բնութիւնը հարուստ է և պարունակում է իր մէջ գիւղատնտեսութեան բազմատեսակ ճիւղեր: Հողագործութիւն, այգեգործութիւն, անասնապահութիւն, շերամապահութիւն, մեղուաբուծութիւն և ուրիշ ճիւղեր կան նահանգի մէջ, սակայն կարօտ են բարեփոխութեան, կատարելագործութեան: Վերջին տարիների ընթացքում աչքի ընկնող առաջադիմութիւն է արել բամբակագործութիւնը, որի զարգացման մեծ զարկ տուին խոշոր գործարանատէրերի ներկայացուցիչները: Զեկուցանողը առաջարկում է, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը մի շարք կըրթական հաստատութիւններով և ձեռնարկութիւններով օգնութեան գայ նահանգի գիւղատնտեսութեան զարգացման:

Ա. Քալանթար, ողջունելով կենտրոնական ընկերութեան կողմից բաժնի բացումը, յայտնեց, որ ընկերութեան կանոնադրութիւնը շատ լայն կերպով է հասկանում գիւղատնտեսութեան զարգացումը և գործունէութեան մեծ ասպարէզ է ներկայացնում նորաբաց բաժնի համար: Սակայն պէտք է աշխատել նոյն իսկ առաջին քայլերից գործնական հողի վրա կանգնել և կենդանի օրինակներով ու գործնական դիւրամատչելի փորձերով գրաւել տեղական գիւղատնտեսների ուշադրութիւնը դէպի իրանց պարապմունքի կատարելագործութիւնը:

Անտուչեվիչ զգուշացրեց գիւղատնտեսներին այն սխալներից, որ անում են անփորձ գիւղատնտեսները՝ ձգտելով, առանց ուսումնասիրելու, ձեռք բերել զանազան մեքենաներ և մտցնել փոփոխութիւններ տնտեսութեան մէջ: Նա առաջարկում է բարեփոխել արհեստը, սակայն գիտակցաբար և ամեն մի քայլը կշռած: Դիչեսկուլով հարկաւոր է համարում նախ և առաջ ուսումնասիրել նահանգի գիւղատնտեսութեան կարիքները: Յ. Մելիք-Բեգլարեան առաջարկեց լուրջ կերպով զբաղվել ընկերութեան գործունէութեան համար միջոցներ հայթայթելու խնդրով, որպէս զի ընկերութիւնը կարողանայ իր ծրագիրը իրագործել: Եղան և ուրիշ խօսողներ:

Իշխան նահանգապետը, համակրութեամբ ընդունելով զանազան առաջարկութիւններ, իր կողմից չեշտեց, որ նա մեծ նշանակութիւն է տալիս այն բանին, ինչ անմիջապէս իրագործվում է, ինչ որ չօշափելի է հասարակ գիւղացու համար և համարում է առաջադիմութիւն այն, ինչ իրապէս դարձել է ժողովրդի սեփականութիւն, ուստի և առաջարկեց մշակել այնպիսի միջոցներ, որոնք գործնական նշանակութիւն ունեն: Այդ տեսակէտից, իշխան Նակաշիձէ նպատակայարմար է համարում, որ ընկերութիւնը ունենայ իր ձեռքի տակ մի մանագէտ-ագրոնոմ, որ մի կողմից կատարէր ուսուցանողի և ղեկավարողի դեր, միւս կողմից ուսումնասիրէր նահանգի գիւղատնտեսութեան ընթացիկ կարիքները:

Ապա ժողովը ձեռնարկեց մի յանձնաժողովի ընտրութեան, որ պէտք է մշակի առաջիկայ գործունէութեան ծրագիրը:

Նիստը սկսվեց ժամը 6-ին և վերջացաւ 9-ին: Ընկերութեան անդամների թիւը հասնում է արդէն 60-ի:

Ն—ն

ամբողջ Նիւթը սպառել: Գրելու այնչափ բան կայ, որ մարդ չուարված չը գիտէ որտեղից սկսէ. ընկերութիւններից թէ անհատներից, քաղաքներից թէ գիւղերից, բարձրից թէ ցածից, գործերից թէ գործողներից, լրագիրներում և գրքերում, կարդացածից, թէ ականջով լսածից: Ուրեմն սկսենք որտեղից որ պատահի:

Ամբողջ Ֆինլանդիան լի է ծայրից մինչև ծայր կանանց ընկերութիւններով: Թոյլ տուէք ձեզ, մեծապատիւ տիկին կամ աղնիւ օրիորդ, երկու օրինակ բերենք՝ մի մեծ քաղաք և մի փոքր գիւղ: Քաղաքը լինի այս երկրի մայրաքաղաքը, որ ունի 66,000 բնակիչ, ուրեմն համարեա թէ մեր Թիֆլիսի կամ Բագուի կէսի չափ, ունի 12 զուտ կանանց ընկերութիւններ:

1) Կանանց ընկերութիւն, հիմնված 1848 թ-ին. հիմնադիրը տիկին Կարոլինա Բորգստրէօմ, նախագահ տիկին Ալիս Բորգստրէօմ, անդամները 42: Նպատակն է այն կանանց համար գործ ճարել, որոնք իրանք չեն կարող տանից դուրս պարապմունք գտնել, նաև հոգ տանել անխնամ ու անպատսպար երեխաներին. ունի և պահում է մի պառաւանոց, երախայանոց, մի մանկանոց, գործատուն սենեակ, ապուր եփելու տուն և այլն: Դրամագլուխ 53,993 մարկ:

2) Կանանց մարմնամարզական ընկերութիւն, հիմնված 1876 թ. հիմնադիրներ՝ տիկիններ Կալլիո ու Լազերբլադ, նախագահ տիկին Կալլիո, անդամներ՝ 105—120: Նպատակն է ընկերութեան անդամների մարմնի և հոգու ոյժերը մարզելով զօրեղացնել, այնպէս որ իդեական սեռի կազմուածքը առողջ դառնայ:

3) Ֆինն կանանց ընկերութիւն, հիմնված 1884 թ., հիմնադիրն է տիկին Լէօվգրէն, նախագահը՝ օրիորդ Ալ. Գրիպենբերգ, անդամներ 123: Նպատակն է գործել իդեական սեռի մտաւոր ու բարոյական զարգացման և նրա նիւթական ու ընկերական-քաղաքական վիճակի բարւոքման համար. ունի մի գրասենեակ, նախնական դասընթացքներ, անային ուսում, շրջիկ վարժուհիներ գիւղերում կանանց ձեռագործ սորվեցնող, մի գրադարան և այլն. ունի նաև 6 ճիւղ դուրսը:

4) Մարեմեան ընկերութիւն. 1885 թ-ին հիմնված, անդամներ 73: Նպատակն է ընկերութեան ամեն շրջանների կանանց միացնել, որ միասին գործեն գործաւոր կանանց բարոյական և մտաւոր առաջադիմութեան, նոյնպէս և նրանց նիւթական վիճակը լաւացնելու համար. ունի մի հիւրանոց կանանց համար ու տալիս է կիրակի օրերը անգործ կանանց աղնիւ զբաղմունք:

5) Կարկարող ընկերութիւն զժբաղդների համար, 1884 թ-ին հիմնված, անդամներ 15: Նպատակն է փորձանքների, հրդեհի, սովի և ուրիշ չարիքի հանդիպողներին հագուստ տալ ու անհրաժեշտ օգնութիւնը հասցնել:

6) Կոյրերի գիրք, հիմնված 1890 թ-ին, անդամներ 55: Նպատակն է կոյրերի համար կարդալու գրքեր գտնել:

7) Երեխաների գործարան, հիմնված 1883 թ-ին: Նպատակն է աղքատ երեխաներին ուսում, զբաղմունք և կերակուր մատակարարել:

8) Գործատուն ի Սէօրնէս, գրեթէ նոյն նպատակով:

9) Կարանող կանանց հոգատար ընկերութիւն, հիմնված 1890 թ-ին, անդամներ 11, նպատակն է կար անող (швейка) կանանց վիճակը բարւոքել:

10) Հեթանոսների համար կարանող ընկերութիւն, 1886 թ-ին հիմնված. այլ և այլ բաներ են կարում, ծախում և փողը տալիս Աֆրիկայում հեթանոսներին քարոզողների ապրուստի համար:

11) Եկեղեցի գնացող աղքատներին ու անկեղներին կրօնական մխիթարութիւն և օգնութիւն բերող ընկերութիւն և:

12) Նաւորդների հոգատար ընկերութիւն. այս խումբ կանայք էլ թէ կարելով, թէ նուէրներով փող են հաւաքում, որ նաւատներին ամեն կերպով օգնեն:

Այժմ, իբր օրինակ, վերցնենք մի գիւղ, որի անունը մենք՝ թէև արդէն 6 տարի է այստեղ ենք՝ առաջին անգամն ենք կարդում. գիւղի անունն է Եէսկիս: Այստեղ կան կանանց երեք ընկերութիւններ. մէկը օգնում է աղքատներին և մի գումար է հաւաքում ժողովրդական բարձր դպրոց բանալու, միւսը աշխատում է գիւղում մի լաւ գրատուն պահելու, և երրորդը ունի կրօնական նպատակ:

Աբո քաղաքը ունի 8 կանանց ընկերութիւն, Վիբորգը՝ 6, Վազա՝ 7, Տավաստեհուս՝ 8, Տամերֆորս՝ 5, Սորդավալա՝ 4, Կուօպիո՝ 10, Բորգօ 8 և այլն և այլն: Եւ պէտք է վկայել, որ իրանց յանձն առած պարտքը և պաշտօնը նրանք բաւական լաւ են կատարում ու ժիր են: Կան ընկերութիւններ, որ թէ մեծ, թէ փոքր գումարներ ունեն, և կան որ իրանց ժողովածը մի և նոյն տարին էլ ծախսում են: Այս էլ պէտք է ասել, որ այդ ընկերութիւնների նախագահները միշտ բարձրաստիճան կանայք են, որ գործում են համոզմունքով և եռանդով և ոչ թէ դատարկ մտափառութեան համար: Մենք վերջին խօսքը ասում ենք այն պատճառով, որ այնքան ընկերութիւններ կան այս երկրում թէ մարդկանց, թէ կանանց կամ թէ խառն, օրինակի համար գրականական, աշխարհագրական, պատմական, նկարչական, և այլն, և այլն, որ եթէ պէտք լինէր մի ընկերութեան անդամի կամ նախագահի վրա զարմանալ, այն ժամանակ պէտք կը լինէր գրեթէ ամեն մի փողոցումն անցնողի վրա զարմանալ, որովհետև մի կրթված մարդ կամ կին, երիտասարդ կամ օրիորդ չը կայ, որ մի կամ մի քանի ընկերութիւններում անդամ չը լինի:

Գանք հիմա մի ուրիշ նիւթի, և հարցնենք թէ ֆինլանդացի կինը ինչ է անում, ինչով է զբաղվում: Շատ բան և շատ բազմատեսակ բաներով: Գուցէ չը հաւատաք, ընթերցող, երբ կարդաք այս տողերը, բայց ինչ որ գրում ենք, առնված է ստոյգ վիճակագրական հաշիւներից: Ինչ ինչ բաների չէ ձեռք զարկել ֆիննուհին. նա գործում է տանը, գործում է դաշտում, մենակ և ընկերովի, գործ է առնում ուրիշից, կամ ինքն է գործ տալի ուրիշին. գործում է ասեղով ու բահով, գրչով ու վրձինով, լեզուով և ձեռքով, ամեն կերպով, ինչպէս որ մարդ ընդունակ է գործել:

(Կը շարունակվի)

բակագործութիւնը, որի զարգացման մեծ զարկ տուին խոշոր գործարանատէրերի ներկայացուցիչները: Զեկուցանողը առաջարկում է, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը մի շարք կըրթական հաստատութիւններով և ձեռնարկութիւններով օգնութեան գայ նահանգի գիւղատնտեսութեան զարգացման:

Ա. Քալանթար, ողջունելով կենտրոնական ընկերութեան կողմից բաժնի բացումը, յայտնեց, որ ընկերութեան կանոնադրութիւնը շատ լայն կերպով է հասկանում գիւղատնտեսութեան զարգացումը և գործունէութեան մեծ ասպարէզ է ներկայացնում նորաբաց բաժնի համար: Սակայն պէտք է աշխատել նոյն իսկ առաջին քայլերից գործնական հողի վրա կանգնել և կենդանի օրինակներով ու գործնական դիւրամատչելի փորձերով գրաւել տեղական գիւղատնտեսների ուշադրութիւնը դէպի իրանց պարապմունքի կատարելագործութիւնը:

Անտուչեվիչ զգուշացրեց գիւղատնտեսներին այն սխալներից, որ անում են անփորձ գիւղատնտեսները՝ ձգտելով, առանց ուսումնասիրելու, ձեռք բերել զանազան մեքենաներ և մտցնել փոփոխութիւններ տնտեսութեան մէջ: Նա առաջարկում է բարեփոխել արհեստը, սակայն գիտակցաբար և ամեն մի քայլը կշռած: Դիչեսկուլով հարկաւոր է համարում նախ և առաջ ուսումնասիրել նահանգի գիւղատնտեսութեան կարիքները: Յ. Մելիք-Բեգլարեան առաջարկեց լուրջ կերպով զբաղվել ընկերութեան գործունէութեան համար միջոցներ հայթայթելու խնդրով, որպէս զի ընկերութիւնը կարողանայ իր ծրագիրը իրագործել: Եղան և ուրիշ խօսողներ:

Իշխան նահանգապետը, համակրութեամբ ընդունելով զանազան առաջարկութիւններ, իր կողմից չեշտեց, որ նա մեծ նշանակութիւն է տալիս այն բանին, ինչ անմիջապէս իրագործվում է, ինչ որ չօշափելի է հասարակ գիւղացու համար և համարում է առաջադիմութիւն այն, ինչ իրապէս դարձել է ժողովրդի սեփականութիւն, ուստի և առաջարկեց մշակել այնպիսի միջոցներ, որոնք գործնական նշանակութիւն ունեն: Այդ տեսակէտից, իշխան Նակաշիձէ նպատակայարմար է համարում, որ ընկերութիւնը ունենայ իր ձեռքի տակ մի մանագէտ-ագրոնոմ, որ մի կողմից կատարէր ուսուցանողի և ղեկավարողի դեր, միւս կողմից ուսումնասիրէր նահանգի գիւղատնտեսութեան ընթացիկ կարիքները:

Ապա ժողովը ձեռնարկեց մի յանձնաժողովի ընտրութեան, որ պէտք է մշակի առաջիկայ գործունէութեան ծրագիրը:

Նիստը սկսվեց ժամը 6-ին և վերջացաւ 9-ին: Ընկերութեան անդամների թիւը հասնում է արդէն 60-ի:

Ն—ն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ գարնան բացվելուն պէս՝ Թիւրքաց Հայաստանի սահմանակից գաւառներից պէտք սկսվի մեծ գաղթականութիւն դէպի Ռուսաստանի սահմանները: Էրզրումի, Վանի և Տրապիզոնի վիլայէթների մի քանի գաւառների հայերը մտադիր են ապաստան գտնել Կովկասի սահմաններում, վերջնականապէս թողնելով իրանց ծննդավայրը:

—

Վերջին փօստով ստացված՝ մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք Ռուսաց գործակալութեան հետեւեալ հեռագիրը Թիֆլիսից. «Անցեալ օրը, սպանութեան մի նոր փորձ անելիս, կալանաւորվեց այն չարագործներից մէկը, որոնք փետրվարի 13-ին վիրաւորել են Ակօպովին: Ժամի 8-ին նա գնաց ալէքսանդրօպոլցի նորեկ վաճառական Սիրականեանցի մօտ, հիւրանոցը, և աներեսութեամբ նրանից փող պահանջելով, դուրս գնաց նրա հետ փողոցը: Քաղաքի բազմամարդ մի տեղում, երբ Սիրականեանց վճռականապէս հրաժարվեց տալ հինգ բուբլուց աւել փող, նա բէվօլվեր արձակեց և Սիրականեանցի ոտի փափուկ մասին վէրք հասցրեց: Ստորին ոստիկանները և անցորդները անյապաղ յարձակվեցան չարագործի վրա: Մի քանի անգամ նա դուրս պրծաւ, փախչել էր ուզում, բայց վերջապէս բռնվեց հասարակութեան միաբան աջակցութեամբ: Բոլորովին ապացուցված է, որ ոճրագործը, որ իրան անուանում է Մարկոս Օհանեանց, նոյն մարդն է, որ փորձել է սպանել Ակօպովին, բայց երկուսն էլ յամառութեամբ լռում են սպանութեան փորձի պատճառի մասին: Կասկածում են, որ նրանք մասնակցել են Գէորգեանի սպանութեան մէջ: Նրանց երկուսին որոնում էին: Ակօպով դեռ առաջ դատի էր ենթարկված իբրև մասնակից երկու տարի առաջ վաճառական Բաֆաէլովի սպանութեան գործին: Մարկոսի անձնաւորութիւնը դեռ չէ որոշված: Ենթադրվում է, որ նա մի դատապարտված, բայց պատժից փախած մարդ է: Քննութիւնը եռանդով վարում է առանձին կարեւոր գործերի քննիչ Մօսկալեվ:»—Ինչպէս երեւում է քննութիւնից, իրան Մարկոս անուանողը երկու անգամ տաժանակիր աշխատանքներից փախած Լեոն Ամինօֆն է: Այժմ մի հարց է ծագում. արդեօք պիտի ամաչէ Սուվորինի օրգանը, որ, հիմնվելով Թիֆլիսում կատարված սպանութիւնների այդ փորձերի վրա, փետրվարի 19-ի համարում մի վերին աստիճանի անարդար առաջնորդող յօդուած է տպել հայերի դէմ:

—

Մի քանի ժամանակ առաջ մենք յայտնել էինք, որ բժ. Վահան Արծրունին մտադիր էր հրատարակել «Բարեկամ» անունով ժողովրդական-գիտնական մի առողջապահական ամսագիր: Բժիշկ Արծրունին այժմ խնդրում է յայտնել, որ ամսագիրը չը պէտք է հրատարակվի իրանից անկախ պատճառներով:

—

Կիրակի օր, փետրվարի 25-ին, Վանքի մայր եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Լեոն վարդապետ Խօջայեանի յիշատակին: Հոգեհանգստին ներկայ էր մեծ բազմութիւն, իսկ Թիֆլիսի քահանաներից՝ մի հոգի:

—

Թիֆլիսեցի Վ. Ս. Քեփինեան, ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ՝ տիկին Էլիսնօրա Կարլօվնա Քեփինեանի նուիրել է 3,000 բուբլի հետեւեալ կերպով. 1) Իգական երկրորդ գիմնազիային 1100 բուբլի, նրա տոկոսով մի աշակերտուհի պահելու. 2) Լիմէրականների ապաստարանին 300 ր. 3) Ելիզաբէտեալ գիւղի դպրոցին կից ապաստարան հիմնելուն 200 ր. 4) Հայոց Կաթողիկոսի տրամադրութեանը՝ գաղթականներին օգնելու համար 200 ր. 5) Հայոց Բարեգործական ընկերութեան 200 ր. 6) Կուկիայի ուղղափառ եկեղեցուն 150 ր. 7) Ձինամէղվարովի գիւղատնտեսական դպրոցին 150 ր. 8) «Եասլի» ընկերութեան մանկական հիւանդանոցին 100 ր. 9) Մալականների դպրոցին 100 ր. 10) Աղքատ աղգականներին և ծառաներին 500 ր.:

—

Թիֆլիսի կօնսիստորիայի պատասխանը, որ տալվեց «Մշակի» նախավերջին համարում, հաղորդեց մեզ մի նորութիւն, որ մենք չը գիտէինք—այն, որ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում գանձանակ է պատեցնվում յօգուտ աղքատների և հաւաքած փողերը յանձնվում են կօնսիստորիային՝ բաժանելու համար: Արդ, հարցնում ենք. եթէ այդ նպատակով կօնսիստորիան փողեր է հաւաքում, ինչու ուրեմն նոյն կօնսիստորիան իրան իրան կամ առաջնորդարան դիմող աղքատներին անդադար ուղարկում է «Մշակի» խմբագրատուն կամ Բարեգործական ընկերութեան գրասենեակը: Եւ ամեն անգամ երբ այդ աղքատներին նկատում են, թէ դիմեցէք առաջնորդարան, կամ կօնսիստորիան, միշտ մի և նոյն պատասխանն են տալիս. «Նրանք ուղարկեցին մեզ այստեղ»: Բաւական չէ, բարեկրօն հայեր, փողեր հաւաքել «նախնաւանդ» սովորութեան համեմատ, այլ պէտք է այդ փողերով օգնութեան դալ աղքատ ժողովրդին: Կամ գուցէ այդ էլ դէմ է կօնսիստորիական «նախնաւանդ» սովորութեան: Ի դէպ, չէր կարելի արդեօք մի փոքրիկ հաշիւ տպագրել, որպէս զի իմանանք, թէ ինչքան փողեր են հաւաքվում գանձանակով՝ աղքատների օգտին, և ինչպէս են բաժանվում: Դա, հաւատացնում ենք, դէմ չի լինի «նախնաւանդ» սովորութեան:

—

Մեր թղթակիցը Կ. Պոլսից մեզ գրում է հետեւեալը. «Սպանուած Տիգրան Գարակէօզեանին եղբայրը Գրիգոր Գարակէօզեան Պոլիս վերադարձած ըլլալով, քիչ օրէն պիտի բացուի Տիգրան Կարագեօզեանի կտակը»: Այդ լուրին թղթակիցը աւելացնում է. «Այն ատեն կը հասկնանք թէ ինչ աստիճան իրականութիւն ունի կտակուած մեծագումար դրամին պատմութիւնը զոր հրատարակել տուին հանգուցեալի գերեզմանին վրա»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ, հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը խնդում է մեզ տպագրել հետեւեալը. «Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է իր շնորհակալութիւնը հանգուցեալ Ստեփան Գէորգեանի ժառանգ՝ եղբայրներ Գէորգեաններին, որոնք նուիրել են յօգուտ Երեւանի թեմական դպրանոցի երեք հարիւր բուբլի ի յիշատակ հանգուցեալի, նոյնպէս և Սեդրակ Դաղեանցին, որը նուիրել է ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ Աբգար Յովհաննիսեան Դաղեանցի՝ հարիւր բուբլի»:

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Լսում ենք, որ յաջորդը մտադիր է ծխականների ժողով հրաւիրելու, որպէս զի խորհրդակցեն երկու նոր արժանաւոր քահանայացուներ ընտրելու մասին: Այդ լուրը միանգամայն ուրախալի է և պատիւ է բերում յաջորդին, որովհետեւ դրանով միայն կարելի է փոդոցներում և դաղտնի կերպով կազմվող համախօսականների առաջն առնել և տգէտ տիրացուներին զսպել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են, փետրվարի 13-ից.

«Ֆրանսիական «Oeuvre des écoles d'Orient»-ի անօրէնը, Հայր Շառմբէան, որ «Ֆիկառօ»-ի մէջ հրատարակած մէկ յօդուածովը կը հրաւիրէր Ֆրանսայի եկեղեցականները դրամ և զգեստ ղրկել Հայաստան, 5000 ֆրանք ղրկած է այդ նպատակով Պատրիարքին, շատ սիրուն նամակով մը:

«Մինչև հիմակ Հայաստան ղրկուելու համար պատրիարքարան հասած դրամական օգնութիւններուն գումարը կը հասնի 17,000 ոսկիի. կը յուսացուի որ այդ գումարը 30,000-ի կը բարձրանայ: Հայաստանի սովելոց յանձնաժողովը աւելի նպաստաւոր պարագաներու մէջ հաղիւ թէ կրցաւ այդքան գումար մը հաւաքել: Այս պարագան կրնայ գաղափար մը տալ ձեզ թէ որքան ժողովրդականութիւն կը վայելէ Իզմիրլեան Պատրիարք և թէ հայ ժողովուրդը սովին տարիներէն ի վեր որքան փոխուած է բարոյապէս, հիմակ քիչ մը սորված ըլլալով ազգէքներու դէմ տոկունութիւն, ինքնապաշտպանութիւն և փոխադարձ օգնութիւն ցոյց տալու եղանակները»:

—

«Times» լրագիրը հաղորդում է, որ աւլթանը առաջարկել է Մուրադին, որ կը ների նրան, թոյլ կը տայ վերադառնալ աքսորից և կը վերադարձնի նրա բոլոր իրաւունքները, եթէ միայն նա կը դադարեցնի իր արշաւանքը սուլթանի դէմ «Միզանի» միջոցով, բայց Մուրադը, մերժել է այդ առաջարկութիւնը և շարունակում է «Միզանի» մէջ բէֆօրմներ պահանջել Թիւրքիայի համար: Եգիպտական կառավարութիւնը չէ համաձայնում Մուրադը յանձնել Թիւրքիային:

—

Արաբկիրի կողմերը կրօնափոխ եղած են հետեւեալ գիւղերը.

«Ամպրկա 70 տուն, Շէփիկ 120, Ծաի 100, Անջրդի 150, Սաղմկա 60, Մաշկերա 120, Խոռոչ 50, Էհնեցիք 40, Հացնի 50, Կռանի 30, Քուշնա 80, Ծապլվար 5, Վաղշէն 60, Վաղաւեր կամ Աղն 20, Վանք 15 տուն:» 960.

—

Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրագրին, թէ լուրեր են պատում, որ շուտով տեղի կունենայ մեծ-վիզիրի փոփոխութիւն և նոր մեծ-վիզիր պէտք է նշանակվի Զէֆնի-փաշան, Հալէպի ընդհանուր նահանգապետը՝ Խալիլ-Ռիֆատ-փաշայի տեղ:

—

Ռէյտէրի գործակալութեան հեռագրում են Կ. Պոլսից, փետրվարի 24-ից.

«Հասած տեղեկութիւններին նայելով, վերջին հինգ օրվայ ընթացքում նոր կոտորածներ են տեղի ունեցել Մալաթիայում և Անատոլիայի ուրիշ կէտերում: Սակայն այդ լուրերը հերքվում են Բ. Դրան կողմից, որը յայտարարում է, թէ կատարեալ հանգստութիւն է տիրում ամբողջ երկրի մէջ: Հալէպից եկած տեղեկութիւնները հաստատում են, որ հայերի խանութները վերջին երեք ամիսները փակված են՝ Թիւրքաց իշխանութիւնների կողմից վստահութիւն չունենալու պատճառով: Այնթաբում 11 հայ բանտարկված են և ասում են, որ գայմագամը փրկանք է պահանջում նրանց ազատելու համար: Նոր խռովութիւններ են տեղի ունեցել քաղաքում»:

—

«Pol. Corresp.» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Անատոլիայի գլխաւոր կոմիսար Շաքիր-փաշան յայտնել է սուլթանին իր վերջին զեկուցագրի մէջ, թէ անհրաժեշտ է դարման զօրք ուղարկել՝ Տէրսիմի շրջանի քիւրդերին զսպելու համար:

—

Մեզ գրում են Էրզրումից, որ Շաքիր-փաշան պաշտօնի է հրաւիրել մի քանի հայերին: Սակայն այդ հայերը բոլորն էլ յայտնի են քաղաքի մէջ իբրև լրտեսներ և վերին աստիճանի արատաւորված մարդիկ:

ՄԵՆԵԼԻԿԻ ՀԲՈՎԱՐՏԱԿԸ

—

Աբիսինիայի թագաւոր Մէնէլիկ, իտալական զօրքի դէմ դուրս գալուց առաջ, հրատարակել է հետեւեալ հրովարտակը:

«Լսեցէք ինձ և թող խլանան մեր հաւատի և հայրենիքի թշնամիները: Լսեցէք ինձ և թող խլանան Մէնէլիկի, ձեր թագաւորի, թշնամիները: Լսեցէք ինձ և թող խլանան Մարիամ կոյսի թշնամիները: Աստուած մինչև այժմ իր ողորմութեամբ պահպանում էր մեր Եթովպիան: Նա թոյլ տուեց մեզ յաղթել մեր թշնամիներին և վերանորոգել մեր հայրենիքը: Աստուծու ողորմութեամբ ես թագաւորել եմ մինչև այժմ, բայց ես չեմ վչտանայ իմ մահվան մասին, եթէ մօտ է իմ վախճանը, որովհետեւ մահը—մեր ընդհանուր վիճակն է: Բայց մինչև այսօր Աստուած ինձ դեռ մի անգամ էլ չէ ենթարկել ստորացման և նա այսուհետեւ էլ չի անի: Ծովի միւս կողմից եկան մեզ մօտ թշնամիներ. նրանք խանգարեցին մեր սահմանների անձեռնմխելի վիճակը և աշխատում են ոչնչացնել մեր հաւատը, մեր հայրենիքը: Ես ամեն ինչ տանում էի և երկար բանակցութիւններ էի վարում, որպէս զի պահպանեմ մեր երկիրը, որ վերջին տարիներս այնքան տանջվում էր: Բայց թշնամին անդադար առաջ է գնում և, գործելով խլուրդի նման, սպառնում է մեր երկրին և մեր ժողովրդին: Բաւական է: Ցոյս դնելով միաստուածական Երրորդութեան վրա, ես պատրաստվում եմ գնալ երկրի պաշտպանութեան և թշնամուն ընդդիմանալու համար: Թող ամեն մէկը, որ ունի ոյժ, հետեւի ինձ, իսկ նրանք, որոնց ոյժերը սպառվել են, թող աղօթեն մեր զէնքի աջողութեան համար: Վօթադարանները (գաւառական բաժիններում գործող զօրքերի մասերը) պիտի հաւաքվեն գլխաւոր բանակը, Ջարոնի մօտ, իսկ Ֆանոսները (պահեստի Զօրքը) պիտի փութով ձեռք բերեն մթերքներ, որպէս զի իմ բոլոր խումբերին (նեգուսի ստորադրեալ կառավարիչներ) կարելի լինի զէնքի կանչել: Ոչ ոք չը պիտի տանը մնայ, որովհետեւ ամենքը պարտաւոր են գնալ պատերազմ հայրենիքի և տան օջախի պաշտպանութեան համար: Ես ուզում եմ իմ չուրջը տեսնել իմ բոլոր զինուորներին: Թող այս յայտնի լինի ձեզ»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, փետրվարի 13-ին

Անչարժութեան չրջան մը կանցնենք. հայը խորասուզված է մեծ-պահքին տխուր միօրինակութեանը մէջ և իսլամը զբաղած ռամազանի հեշտութիւններով: Այս հանդարտութեան մէջ արձանագրելիք կարեւոր իրողութիւնները կը պակսին:

Օրուան խնդիրը սակայն Խրգայի-Շերիֆի կայսերական գնացքի խնդիրն է: Խրգայի-Շերիֆը մարգարէին վերարկուն է, Ստամպօլի կողմը Թօք-Գաբու-Սէրային մէջ պահուած, ուր կերթայ սուլթանը ռամազանի 15-ին հանդիսաւոր գնացքով համբուրել և ուխտ դնել: Տարուան մէջ պատահած միակ առիթն է, ուր սուլթանը պարտաւորուած է անպատճառ դուրս ելլել Ելդիզի ամրութիւններէն, հազար ու մէկ զգուշութիւններով: Այս տարի կերեի թէ սուլթանը հարկ տեսած է բազմապատկել զգուշութիւնները: Բանի մը օրէ ի վեր քաղաքապետութիւնը, սուլթանին հրամանով, սկսած է քակել և պրպտել տալ բոլոր կոյուղիները, որոնք կը գտնուին Խրգայի-Շերիֆի թափորին անցնելիք ճամբաներուն վրա. կոյուղիները լաւ մը խուզարկուելէ ետք կը գոցուին և մանաւոր հսկողութեան կը յանձնուին:

Կոյուղիներու խուզարկութենէն զատ, ուրիշ անօրինութիւններ ալ ձեռք առնուած են. թափորին օրը, որ առաջիկայ շաբաթ օրուան կը հանդիպի, պիտի փակուին խանութները, որոնք հանդիսաւոր գնացքին ճամբուն վրա կիյնան և տունները խիստ հսկողութեան ներքև պիտի առնուին:

Նախորդ նամակիս մէջ գրած էի, թէ կառավարութիւնը «Իգտամ» թերթին մէջ հրաւիրած էր Մուրատ-պէյը եղեռնագատ ատենին ներկայանալ իր պատիւը պաշտպանելու համար, եթէ պարկեշտ մարդ է: Մուրատ-պէյ սուլթանին, շէյխ-իւլ-իսլամին և մեծ-եսպարքոսին պատասխան ղրկած է, թէ ինք դատուելէ չի փախչիր. սակայն չի կրնար ներկայանալ Պոլսոյ դատարանին առջև, որուն անդամները 40—50 ոսկիի համար արդարութիւնը և իրաւունքը կը ծախեն. պատրաստ է Պոլիս գալ ու դատուիլ, եթէ գերագոյն ատեան մը կազմուի Այա-Սոֆիան մզկիթին մէջ, միմիայն իւլէմաներէ բաղկացած և այն պայմանով, որ նա, որուն ինքը չարիքներու պատճառը համարէ, իրեն հետ գրաւէ ամբաստանեալի նստարանը: Մուրատ-պէյի պատասխանը մեծ ապաւորութիւն առաջ բերած է իսլամ շրջանակներու մէջ:

Պ—ի

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 փետրվարի: Փետրվարի 22-ին աշխարհագրական ընկերութեան դահլիճում կայացաւ սլաւոնական բարեգործական ընկերութեան ժողովը՝ Բոլգարիայից վերադարձած կոմարովի զեկուցումը: Կոմարով բազմակողմանի կերպով նկարագրեց Բոլգարիայի այժմեան պետական ոյժերը և ժամանակակից պետական անձանց: Մանաւանդ պայծառ գոյներով նկարագրեց նա Բոլգարայի բարձր հոգեորականութեան բնաւորութիւնը և ժամանակակից դրութիւնը, նոյնպէս և բոլգարական զօրքերի և բոլգարական քաղաքական կուսակցութիւնների դրութիւնը: Ընթերցանութեան մեծ մասը նուիրված էր բոլգարական իշխան Ֆերդինանդին: Իշխան Ֆերդինանդը մեծ ընդունակութիւնների տէր մարդ է, գեղեցիկ կրթված, բնաւորութեամբ և հոգու այնպիսի

յատկութիւններով, որոնց վրա կարելի է հիմնել գեղեցիկ երեսներ բոլգարական ժողովրդի կեանքից։ Դասախօսը մեծ աջողութիւն ունեցաւ։

ՆԻՑՑԱ, 23 փետրվարի։ Ժողովրդի անհամար բազմութիւն սպասում էր Թագաժառանգ Ցեսարեվիչի գալուն կայարանի մօտ, որը զարդարված էր ռուսաց և ֆրանսիական դրօշակներով և զինանշաններով։ Նորին Կայսերական Բարձրութիւնը հագած ունէր ռուսաց ծովային համազգեստ «պատուաւոր լեգիօնի» չքանշանով։ Նորին Բարձրութիւնը կատարելապէս առողջ տեսք ունէր։ Թագաժառանգ Ցեսարեվիչին զինուորական պատիւներ տրվեցին։ Ճանապարհի վրա կանգնած աղգաբնակութիւնը ողջունում էր Թագաժառանգ Ցեսարեվիչին օգնորված աղաղակներով. կանայք մինչեր էին գցում։ Նորին Բարձրութիւնը ողորմած կերպով էր պատասխանում հասարակութեան ցոյցերին։ Ֆրանսիայի աղգաբնակութիւնը հրաշալի ընդունելութիւն ցոյց տուեց Թագաժառանգ Ցեսարեվիչին։

ՀՌՕՄ, 23 փետրվարի։ Հաւատացնում են, որ թագաւորն արդէն ստորագրեց գեներալ Բարատիէրիի ծառայութիւնից արձակման թուղթը։ Զինուորական մինիստրութիւնը ուղարկեց զինուորական գլխաւոր պրօկուրօրին գեներալ Բարատիէրիի ծառայութեան ցուցակը։ Պատգամաւորների ժողովի նախագահները, արիբունները, դիպլոմատիական օթեակները լցված են։ Կրիսպի հաղորդում է մինիստրութեան հրաժարականի մասին։ Ակվում են երկարատև ծափահարութիւններ։ Նստարաններից չատերի վրա լսվում են «կեցցէ թագաւորը» բացականչութիւնները։ Ձախակողմի վրա լսվում են ազմկալի բացականչութիւններ։ Կրիսպի ուելացնում է, որ մինիստրութիւնը ժամանակաւորապէս մնում է պաշտօնի մէջ մինչև նոր մինիստրութեան կազմակերպութիւնը։ Մեծ աղմուկ և բարձրաձայն աղաղակներ ձախակողմից։ Նախագահը առաջարկում է պատգամաւորների ժողովին յետաձգել նիստը մինչև որ թագաւորը կը կայացնի իր վճիռը։ Երկարատև աղմուկ ծայրայեղ ձախակողմում։ Նիստը փակվեց՝ սաստիկ զրգռված դրութեան մէջ։ Սենատում Կրիսպի հաղորդեց նոյնը։ Սենատը յետաձգեց իր նիստերը անորոշ ժամանակով։

ՆԻՑՑԱ, 24 փետրվարի։ Մօնակօում իշխան Ալբերտի կողմից արած սրտագին ընդունելութիւնից յետոյ, նախագահ ֆօր եկաւ Թագաժառանգ Ցեսարեվիչի «Ֆիւրբի» վիլլան։ Նախագահին իսկոյն մտցրին դահլիճը, ուր գտնվում էին Թագաժառանգ Ցեսարեվիչը «պատուաւոր լեգեօնի» չքանշանով, Լէյխտէնբերգեան դուքսը և Օլդենբուրգեան պրինցը։ Տեսակցութիւնը տեւեց քսան րոպէ։ Խօսակցութեան առարկան այն սրտագին ընդունելութիւնն էր, որ արին նախընթաց օրը Նիցցայում Թագաժառանգ Ցեսարեվիչին և որից չատ զգացված էր Նորին Բարձրութիւնը։ Քաղաքական խնդիրների մասին չը խօսեցին։

ՊԱՐԻԶ, 24 փետրվարի։ Պարիզում և Բրիւքսելում լուրեր են պատում, որ Կրիսպի սպանված է։ Տուլօնից հեռագրով հաղորդված է, թէ Մօնտէ-Կարլօից և Վենտիմիլից եկած ճանապարհորդները հաղորդում են, որ իտալական սահմանի վրա տարածված է լուր, որ իբր թէ Կրիսպի սպանված է դաչոյնի եօթ հարուածներով։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ Պարիզում և Բրիւքսելում տարածված լուրերը Կրիսպիի սպանութեան մասին ոչինչ հիմք չունեն։ Կրիսպի կենդանի է և առողջ։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ Մասնաւոր հառադիրները Մասսօվայից նկարագրում են Ադուի մօտ եղած ճակատամարտը։ Փետրվարի 11-ին Բարատիէրի վճռեց յետ քաշվել դէպի Ադի-Կայէ. փետրվարի 12-ին նա ուշացրեց յետ քաշվելու մասին տուած հրամանը, իսկ փետրվարի 17-ին վճռեց յարձակվել թշնամու վրա։ Նոր տեղեկութիւնների համեմատ, պատերազմի ժամանակ տեղի ունեցաւ ընդհանուր կոտորած։ Ամենանոր տեղեկութիւնների համեմատ, ընդհակառակն, պարտութիւնը, ըստ երևոյթին, այնքան զօրեղ չէ, որպէս կարծում են։ Յետ քաշված և ցրված զօրամասները կամաց կամաց գալիս են։ Շօացիները չը հալածեցին յետ քաշվողներին։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ Երէկ թագաւորը ընդունեց Բիանկէրիին, գեներալ Ռիկոտտիին, վիսկոնտի-Վինոստային և դի-Ռուդինիին։

Պատգամաւորների ժողովի նիստի փակումից յետոյ, ժողովուրդը չարունակում էր կանգնել Մօնտէ-Զիտորիս հրապարակի վրա, մինչև որ պոլիցիան չը ցրվեց ամբոխը և պատգամաւորների ժողովի դռները չը բռնեցին զօրքերը։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ Միլանում ցոյցեր տեղի ունեցան, որոնց ժամանակ կոտրտեցին ապակիներ և վիրաւորեցին մի քանի պաշտօնական անձանց, զինուորներին, քաղաքացիներին։ Այսօր տեղի ունեցաւ պրէֆէկտի կարգադրութիւնը, որով արգելվում են ամեն տեսակ համախմբումներ։ Պարտում նոյնպէս անկարգութիւններ են սկսել։ Զինուորների մի վաշտ հրացաններ արձակեց ցոյց անողների գլխից վերև, որից յետոյ կարգը վերահաստատվեց։

Զը նայելով որ թագաւորը ոչ օրին դեռ ևս չէ յանձնել նոր մինիստրութեան կազմակերպութիւնը, «Popolo Romano» և «Messaggera» պնդում են, որ նշանակվում է դի-Ռուդինի-Ռիկոտտիի մինիստրութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 24 փետրվարի։ Ընդհանուր կարծիքով, Աբիսինիայում իտալացիների կրած պարտութիւնից յետոյ, Իտալիան պէտք է ջնջվի մեծ պետութիւնների ցուցակից, որի պատճառով նոր դարաշրջան է սկսվում եւրօպական քաղաքականութեան համար։ Անգլիական մամուլը յայտնում է իր համակրութիւնը Իտալիային, բայց խորհուրդ է տալիս նրան հաշտվել այդ դրութեան հետ, հանդարտվել։ «Daily Telegraph» լրագիրը, Զէմբէրլենի օրգանը, ասում է, որ «մինչև անդամ այն ժամանակ, երբ երեքպետեան դաշնակցութիւնը իր ոյժի և փառքի գագաթնակէտի վրա էր, նա չը կարողացաւ պատերազմ սկսել ֆրանս-ռուսական դաշնակցութեան ահագին ոյժերի դէմ։ Աւստրօ-գերմանական դաշնակցութիւնը ոչ մի տեղ բարեկամներ չունի։ Ռուսաստանը խաղաղութիւն է ցանկանում և կարող է նրան պահպանել։

ՀՌՕՄ, 25 փետրվարի։ «Ital. Milit.» լրագիրը հաղորդում է, որ Ադուի մօտ իտալական զօրքերի ընդհանուր կոտորածի թիւը հասնում է 4,500։ Հոգու գեներալ Դա-Բօրմիդա հաւանօրէն սպանված է։ Ալբերտոնէ ձիուց ընկաւ վիրաւորված, իսկ գեներալ Արիմոնդէ կորաւ։

«Corr. della Sera» ամսագիրը հաղորդում է, որ պարտութեան պատճառը պէտք է որոնել ոչ միայն զինուորների ֆիզիկական և բարոյական դրութեան մէջ, բայց և զօրքերի սխալ դասաւորութեան մէջ։ Գեներալ Ալբերտոնէի բրիգադան պատերազմում էր յամառութեամբ և կատաղի կերպով՝ կատարելապէս հաւատացած լինելով, որ յաղթութիւնը կը տանի. սակայն երկու ժամ տեղ կուից յետոյ, որի ժամանակ սպանվեցան չատ օֆիցէրներ, զօրքերի անձնվատահութիւնը պակասեց։ Բոլորովին իզուր մօտեցաւ պահեստի վաշտը՝ մայոր Բալլիի հրամանատարութեամբ. նա չրջապատվեց թշնամիներից։ Դա-Բօրմիդա և Արիմոնդի գեներալների բրիգադաները չատ ուշ առաջ շարժվեցին և ջարդվեցին չուացիների յարձակումից։ Լուր է պատում, որ գնդապետ Գալլիսնօ և գեներալ Արիմոնդի գերի են առնված։

«Opinione» լրագիրը հաղորդում է, որ Ադիգրատից ստացված տեղեկութիւնները անբարեյաջող են։ Բերդը չրջապատված է չօացիների գնդերով։ Գեներալ Բալդիսէրա հաղորդում է, որ այժմ ոչինչ չէ կարող անել Ադիգրատի ազատութեան համար, որը մի ամսվայ պաշար ունի։ Այդ կէտի բերդապահ զօրքը բաղկացած է իտալական մէկ բատալիօնից՝ մայոր Պրօստինարիի հրամանատարութեան տակ։ Կարծում են, որ Ադիգրատում հաւաքվել են չատ վիրաւորվածներ և փախստականներ փետրվարի 18-ին ջարդ կրած զօրամասերից։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ Մինիստրական ճգնաժամի լուծման մասին տարածված լուրերը հակասում են միմեանց։

ՀՌՕՄ, 25 փետրվարի։ Փետրվարի 23-ին, երեկոյեան, ժողովուրդը փարձում էր ցոյց անել Պիացցա դի-Կոլօննայում։ Ցոյցը աջողութիւն չունեցաւ։

Կ. ՊՕԼԻՍ, 25 փետրվարի։ Արտաքին գործերի մինիստր Տուրխան-փաշա Կրիտէ կղզու վալի է նշանակված։

ՍՕՖԻԱ, 25 փետրվարի։ Հաղորդում են, որ սուլթանը ստորագրեց պրինց Ֆերդինանդին Բոլգարիայի իշխան ճանաչելու ֆիրմանը։ Իշխան Ֆերդինանդը մարտի կէսին Կ. Պոլիս է գնում։

ԼՕՆԴՕՆ, 25 փետրվարի, Դիպլոմատիական չրջաններում հնարաւոր են համարում, որ Ռամբերտօ թագաւորը կը հրաժարվի գահից, որովհետև անհնարին է համարում Էրիտրէից հրաժարվելու համաձայնութիւնը տալ, բայց ցանկանում է փրկել զինաստիան։ Գահաժառանգ Նեապոլիտանեան պրինցը, որը վաղուց Կրիսպիի հակառակորդ է, կը բանայ նոր քաղաքականութեան դարաշրջան։

Գլադստոն յայտնեց «Daily Telegraph» լրագրի թղթակցին, որ վախենում է Իտալիայի միութեան համար։

«Times» լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ Իտալիայի կրած ջարդը վերջնական հարուած հասցրեց երեքպետեան դաշնակցութեան։

ՀՌՕՄ, 26 փետրվարի։ Հրատարակված է փետրվարի 18-ի պատերազմից կենդանի մնացած 189 և դերի ընկած 5 օֆիցէրների ցուցակը։ Հեռագիրները նկարագրելով Ադուայի պատերազմը յայտնում են, որ Դի-Բօրմինդաի գնդի մեծ մասը ոչնչացել է։ Նրա մնացորդները դիմադրում էին մինչև երեկոյ և այդպիսով կանգնեցրին թշնամու յարձակումը։ Դի-Բօրմինդա գեներալը, գնդակահար եղած, մեռաւ իր զինուորների չրջանում։ Փոխ-գնդապետ Միլլինի մեռնելով՝ բացականչեց՝ «առաջ, իմ ալպիացի հրացանաձիգներ»։ Ամարի զօրքերը սպանում էին և կողոպտում վիրաւորվածներին, իսկ վիրաւորված սակարիների ձեռքերը և ոտները կտրում էին։ Բատարէյների մօտ եղած ծառաներին սպանեցին։ Արիմոնդիի գնդի բատարէյի բոլոր օֆիցէրները սպանվեցին։ Կարծում են, որ ինքը Արիմոնդի կամ սպանված է, կամ գերի է ընկել։ Ալբերտոնիի գունդը ընկաւ մի նեղ ձորում, որտեղ չը կարողացաւ գործել օգնութեան ուղարկված զօրքը։ Շօացիները գրաւեցին բարձրութիւնները։ Շօացիները կողոպտեցին 113 սայլ իրեր և տարան ջօրիներով։ Զինուորական պաշարը փրկված է։ Շօացիները հրացաններ էին արձակում սանիտարների խմբերի վրա և վիրաւորում էին բժիշկներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 23-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	95 կ.	
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	77½ »	
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	20 »	
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »	
Մաքսային կուպոններ — . .	149 »	— »	
Բօրսային դիսկօնտ — . .	7½ »	— »	
4% պետական բէնտա	98 »	— »	
Ներքին 5% առաջին փոխառութ.	284½ »	— »	
— — երկրորդ —	258½ »	—	
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	217 »	75 »	
5% պետական երկաթուղ. բէնտա.	100⅜ »	— »	
4% ներքին փոխառութեան . . .	97½ »	— »	
4½% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	100⅛ »	— »	
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100⅓	—	
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	— »	— »	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օրլիգացիաները.	101 »	75 »	
Մոսկվայի քաղաք. օրլիգացիաներ.	101⅝ »	— »	
Օդեսայի — —	100 »	50 »	
Թիֆլիսի — —	98½ »	— »	
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	100 »	50 »	
5% — — — . .	99⅜ »	— »	
Քուրսկի — 6% . .	100 »	50 »	
5% — — — . .	99 »	— »	

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԳԵՁՐԼՈՒ. Թ. ք. Մէլիք-Ղազարեանց։ Եթէ նուիրող լինի, ուրախութեամբ կը յատկացնենք ձեր գրադարանին՝ բաժանորդագնից պակաս մը նացած 5 ռուբլի։ Իսկ եթէ ոչ, պէտք է ուղարկեք, որովհետև ուրիշ պայմանով «Մշակ» չենք ուղարկում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԴԵՏԱՅԻՆ ԿՕՐՊՈՒՍԻ

ՊԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Գ. ԼԻՆՍԿԻ

Ցանկացողների համար սովորել պարահանդիսային պարեր գարնան համար ես նշանակել եմ դասընթաց այս տարվայ մարտի 1-ից մինչև մայիսի 15-ը։ Առաջարկում եմ յայտնել և գրվել ոչ ուշ մարտի 1-ից, որպէսզի նոր մըտնող աչակերտուհիների և աչակերտների ուսուցումը կարելի լինի միաժամանակ սկսել, որ չատ օգտակար է պարերի աւելի չուտ և հիմնաւոր ուսումնասիրութեան համար։ Վճարը չափաւոր է։ Աջողութիւնը անկասկած։ Սասերնայա փողոց, № 26։ (№ 15) 1—3

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

պատրաստելու ամենալաւ սիստէմի պատկանող „ԴԱԴԱՆԻ“ կոչված ՓԵՏԱԿՆԵՐԸ։ ԳԻՆԸ 1 փետակին, իր բոլոր մասերով, 5 ռուբլի։

Հասցէս՝ ЕЛИСАВЕТПОЛЬ. Пчеловоду Оганесу Оганесянцу.

(№ 24) 1—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Դ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԴՕԿՏՕՐ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ

կը յայտնէ իրան դիմող հիւանդներին, թէ առաջիկայ սեպտեմբերից սկսեալ կը վերահաստատվի ՎԻԵՆՆԱ և իր հասցէն հետեւեալն է.

Dr. WAHE MINASSIAN
Operator an der Klinik des Professor Chrobak. VIII. Schlösselgasse 10.
OESTERREICH WIEN

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕԻ ՄԷՋ

ծախվում են ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ, Հաջի Իզմայիլ-օղլիի այգուց, որ գտնվում է Բէլկանիում։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

1893 թ. յունիսի 8-ին Պանդոկային Արդիւնաբերութեան կանոնադրութեան § 34 համաձայն, Քաղաքային Վարչութիւնը խնդրում է շնորհ բերել իր շինութիւնը՝ հիւրանոցներ պահողներին այս տարվայ մարտի 2-ին, շաբաթ, րեստօրաններ և կոֆե-ռեստօրաններ պահողներին ներկայ տարվայ մարտի 6-ին, չորեքշաբթի, բուֆետների տէրերին ներկայ տարվայ մարտի 8-ին՝ ուրբաթ, խոհանոցներ ունեցող կահաւորված սենեակների, դարեջրատների և նախաճաշիկ կամ տաք կերակուր ծախող „բէնսկովի պօգրեբ“ անուանված գինետների տէրերին այս տարվայ մարտի 9-ին՝ շաբաթ, իրանց մէջ որոշելու համար յօգուտ քաղաքի տրվելի պանդոկային տուրքը ներկայ 1896 թ-ին, առաւօտեան 10 ժամին։

Իսկ պանդոկների, դուխանների, սրճարանների, նախաճաշիկ կամ տաք կերակուր ծախելու իրաւունք ունեցող թէյարանների, կոնդիտէրների, կարկանդակներ տեղն ու տեղը ուտելու, և ուտելեղէնների խանութների, իջևանների տէրերին, Քաղաքային Վարչութիւնը նոյն Պանդոկային Արդիւնաբերութեան կանոնադրութեան §§ 33 համաձայն, խնդրում է շնորհ բերել իր շինութիւնը՝ 1) ՊԱՆԴՈԿՆԵՐ պահողներին այս տարվայ փետրվարի 20-ին, երեքշաբթի, 2) ՍՐՃԱՐԱՆՆԵՐ, ՆԱԽԱՃԱՇԻԿ կամ ՏԱՔ ԿԵՐԱԿՈՒՐ ԾԱԽՈՂ ԹԷՅԱՐԱՆՆԵՐ, ԿՈՆԴԻՏԷՐՆԵՐ և ՏԵՂՆ ՈՒ ՏԵՂԸ ՈՒՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ ԾԱԽՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ տէրերին այս տարվայ փետրվարի 22-ին, հինգշաբթի, 3) ՈՒՏԵԼԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐ պահողներին այս տարվայ փետրվարի 24-ին, շաբաթ, 4) ԻՋԵՒԱՆՆԵՐ պահողներին այս փետրվարի 27-ին, երեքշաբթի և 5) դուխաններ պահողներին այս տարվայ փետրվարի 29-ին, հինգշաբթի, որոշող յանձնաժողովի անդամներ ընտրելու համար, առաւօտեան 10 ժամին։ (№ 22) 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը

	Գինը
1) ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կոպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 “
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 “
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի.	20 “

Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։ (№ 59) 10—10

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Февраля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 22